

Հաստատված է՝

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան

պետական մանկավարժական ինստիտուտ»

ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի

**« 24 » մայիսի 2013 թ. նիստում**

Խորհրդի նախագահ՝ \_\_\_\_\_ Վ. Գրիգորյան

**«ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ**

ԳՊՄԻ-ի որակի ապահովման (այսուհետ՝ ՈԱ) քաղաքականությունը ԳՊՄԻ-ի առաքելության, ռազմավարական նպատակների իրականացմանն ուղղված գործողությունների և գործընթացների ընդհանուր ուղեցույց ու ընթացակարգ է, որը համապատասխանեցված է Բարձրագույն կրթության զարգացման ՀՀ քաղաքականության նպատակներին ու սկզբունքներին, եվրոպական չափորոշիչներին ու ուղենիշներին, ինչպես նաև հասարակության կողմից ձևավորված պահանջներին:

ՈԱ-ի քաղաքականության հիմք են ԳՊՄԻ-ի իրական կարողությունները և դրանց հաշվառմամբ ընտրված կոնկրետ գործողությունների իրականացման գործիքակազմը:

ՈԱ-ի քաղաքականության նպատակն է.

- Ապահովել ԳՊՄԻ-ում բարձրագույն մասնագիտական կրթության բարելավումը՝ մասնագիտական կրթությունը համապատասխանեցնելով արտաքին և ներքին շահակիցների կարիքներին:
- ԳՊՄԻ-ում բարձրագույն կրթության, ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման, գիտական հետազոտությունների բարձր մակարդակի ապահովման համար ինստիտուցիոնալացված, թափանցիկ և իրատեսական ընթացակարգերի ներդրում:

**ԳՊՄԻ-ի որակի ապահովման քաղաքականության խնդիրներն են.**

- բարելավել ԳՊՄԻ-ի կառավարման համակարգը և կատարելագործել նրա կառույցները,

- ԳՊՄԻ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխանեցումը որակավորումների ազգային շրջանակի բնութագրիչներին,
- ապահովել ԳՊՄԻ-ի ուսանողների, պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմի պատշաճ ներգրավվածությունը ԳՊՄԻ-ի որակի ապահովման գործընթացներում,
- նպաստել բուհում գիտահետազոտական գործունեության զարգացմանը և ուսումնական գործընթացի հետ նրա փոխկապակցվածությունը,
- նպաստել ԳՊՄԻ-ի ֆինանսական, կրթական և այլ ռեսուրսների՝ առավել արդյունավետ և նպատակային պլանավորմանը և բաշխմանը,
- նպաստել ինստիտուտի հասարակական պատասխանատվության բարձրացմանը՝ ապահովելով հաշվետվությունների թափանցիկություն և հասանելիություն,
- նպաստել ինստիտուտի աճող միջազգայնացմանը, Հայաստանի Հանրապետության և արտերկրի համալսարանների հետ փոխադարձ կապերի հաստատմանն ու զարգացմանը, ակադեմիական փոխանակումների ու շարժունության խրախուսմանը և բարձրագույն կրթության եվրոպական միասնական տարածքին ինտեգրմանը,
- ամրապնդել և ներդաշնակեցնել ՈԱ համաինստիտուտային և ֆակուլտետային կառույցների գործունեությանը որակի կառավարման հարցերում,
- որակի կառավարման շրջափուլային մոդելի ներդրմամբ անընդհատ բարելավել ՈԱ համակարգը, կատարելագործել և արդիականացնել ՈԱ գործառույթները, ընթացակարգերը, չափանիշները և դրանց հետ առնչվող պաշտոնական փաստաթղթերը,
- ապահովել որակի ներքին և արտաքին գնահատման գործընթացների փոխհամաձայնեցումը՝ նպաստելով ԳՊՄԻ-ի և նրա կրթական ծրագրերի հավատարմագրմանը,
- նպաստել ինստիտուտում որակի շարունակական բարելավման մշակույթի ձևավորմանը և հետագա զարգացմանը:

## **ԳՊՄԻ ՈԱ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ**

ԳՊՄԻ որակի ապահովման քաղաքականության նպատակների իրականացումն ու ինդիկորների լուծումը ենթադրում են ՈԱ հետևյալ հիմնական ընթացակարգերը:

### **1. Կրթական ծրագրերի ՈԱ.**

- կրթական ծրագրերի համապատասխանեցում որակավորումների ազգային և եվրոպական շրջանակներին,
- կրթական ծրագրերի պլանավորման, փորձաքննության, պաշտոնական հաստատման, պարբերական մշտադիտարկման, գնահատման և վերանայման գործընթացներում բոլոր շահակիցների (ուսանողների, գործատուների, դասախոսների) ներգրավվածության ապահովում,
- կրթական ծրագրերի սահմանված նպատակների և դասավանդման, ուսումնառության ու գնահատման ընտրված մեթոդների համապատասխանեցում ակնկալվող կրթական վերջնարդյունքներին,

- ծրագրերի և դասընթացների բովանդակությունը, ուսուցման մեթոդաբանությունը և ծրագրերի իրականացման որակը գնահատելու նպատակով ուսանողների բավարարվածության վերաբերյալ պարբերական հարցումների անցկացում:

## **2. Ուսումնառության ՈԱ**

- Դասընթացի և առանձին ուսումնական մոդուլի յուրացման արդյունքների օբյեկտիվ և թափանցիկ գնահատում (ընթացիկ և ամփոփիչ քննություններ):
- Ծրագրի կրթական վերջնարդյունքների օբյեկտիվ և թափանցիկ գնահատում (ավարտական ամփոփիչ ատեստավորում):
- Գնահատման ձևերի ու մեթոդների արդյունավետության վերաբերյալ ուսանողական պարբերաբար հարցումների կազմակերպում:
- Ուսանողների գնահատման գործընթացի վերաբերյալ դասախոսների շրջանում պարբերական հարցումների անցկացում՝ կիրառվող չափանիշների, ձևերի ու մեթոդների արդյունավետության գնահատման նպատակով:

## **3. Դասախոսական կազմի ՈԱ**

- Դասախոսական կազմի գործունեության արդյունավետության պարբերական գնահատում բազմաչափ մոտեցմամբ՝ ներառելով ուսանողների, ամբիոնի և գործընկեր դասախոսների կողմից դասախոսի գնահատումը, դասախոսի ինքնագնահատումը:
- Դասախոսների որակավորման աստիճանական բարձրացման և մասնագիտական վերապատրաստման գործուն համակարգի մշակում և իրականացում:
- Դասախոսական կազմի մրցութային ընտրության, պաշտոնների տեղակալման, տարակարգային առաջընթացման և նյութական խրախուսման գործուն համակարգերի կիրարկում:

## **4. Գիտահետազոտական գործունեության ՈԱ.**

- գիտահետազոտական աշխատանքներում պրոֆեսորադասախոսական կազմի լայն ներգրավում,
- գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության խրախուսում,
- դասախոսական կազմի մրցութային ընտրության, պաշտոնների տեղակալման, տարակարգային առաջընթացման և նյութական խրախուսման գործում գիտական հրատարակությունների թվի և վարկանիշների հաշվառում:

## **5. Ուսումնական ռեսուրսների և օժանդակ ծառայությունների ՈԱ.**

- ուսումնական ռեսուրսների և օժանդակ ծառայությունների որակի գնահատում ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցախույզերի միջոցով, որոնք գնահատում են գրադարանի և համակարգչային սրահների աշխատանքը, համացանցի մատչելիությունը,

լսարանների և ուսումնական լաբորատորիաների կահավորանքը, կարիերայի կենտրոնի աշխատանքը և խորհրդատվական այլ ծառայությունների արդյունավետությունը,

- ուսումնական ռեսուրսների և օժանդակ ծառայությունների որակի գնահատում դասախոսների բավարարվածության վերաբերյալ հարցախույզերի միջոցով, , որոնք գնահատում են ինստիտուտի ենթակառուցվածքներն ու դրանց կառավարումը, գրադարանի և համակարգչային սրահների աշխատանքը, համակարգիչների ու համացանցի մատչելիությունը, լսարանների և ուսումնական լաբորատորիաների կահավորանքը և այլն:

#### **6. Հանրային ներգրավման ՈԱ.**

- ԳՊՄԻ-ի վերաբերյալ հրատարակվող նյութերի քանակի, ծավալի և բովանդակության մշտադիտարկում,
- ԳՊՄԻ-ի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրությունների պարբերաբար անցկացում,
- շարունակական կրթության և վերապատրաստման դասընթացներում ԳՊՄԻ-ի ընդգրկվածության գնահատում: